

□□□□□ □□□□□□□□



Սուկրատ և Արեգնազ Ղազարյանների ընտանիքում 1951թ.սեպտեմբերի 15-ին ծնվեց նրանց որդին` Նորիկը: Դեռևս դպրոցում Նորիկը պարտաճանաչությամբ ու համեստությամբ, մեղմ ու հանդարտ բնավորությամբ, ընկերներին օգնելու պատրաստակամությամբ ու բոլորի նկատմամբ հարգալից վերաբերմունքով դարձավ դասընկերների և ուսուցիչների սիրելին:

Դպրոցն ավարտելուց հետո Նորիկը ընդունվեց, այնուհետև հաջողությամբ ավարտեց Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը: Նրան վտահվեցին հայրենի գյուղում ձեռնարկված շինարարական աշխատանքները: Սակայն արցախյան պատերազմը խառնեց բոլոր խաղաթղթերը: Նորիկը Ղազարյանը սկզբում մասնակցեց Երասխավանի պաշտպանական մարտերին, այնուհետև մեկնեց Մարտակերտ: Շարքային զինվորը կարճ ժամանակում դարձավ վաշտի հրամանատար:

Կարճ ժամանակում ազատագրվեցին Մարտակերտի շրջանի Հակոբ Կամարի, Տոնաշեն, Մաղավուզ, Մատաղիս գյուղերը: Թալիշը դարձավ վերջինը: Նորիկը նահատակվեց ամենագեղեցիկ ամսին` 1994թ. ապրիլին:

ՓԱՌՔ ՔԵՋ ԶԻՆԿՈՐ, ՈՐ ՄԻԱԿԴ, ՄԻԱՄՈՐԻԿԴ ՃԱԿԱՏԴ ԼՈՒՍԱՊՍԱԿՈՎ
ԶԱՐԴԱՐԵՑԻՐ....

□□□ □□□□□□

Չեմ մոռանում ես հայրիկիս, չեմ մոռանում,

Նա իմ մտքից, նա իմ սրտից չի հեռանում,

Միշտ իր խոհուն խոսք-գրույցով խոսում ինձ հետ,

Միշտ ժպտում է, ուրախանում ու նայում է դեպի մեզ:

Երեկ չէր, արդյոք,

Որ գալիս էր տուն:

Մեղմիկ քայլերով, ծիծաղով ժպտում

Մոտենում էր մեզ:

Մորն էր փաթաթվում, համբուրում նրան,

Կատակում սիրով որդիների հետ:

Վաղ առավոտյանդուրս եկավ տանից.

Հայր իմ, չսպասեք այս երեկո ինձ,

Արցախ ենք գնում, գուցե...տուն չգամ,

Չթախծես, հայր իմ, ամուր պահիր քեզ...

Դեհ, մնաք բարով,- Հեռացավ այսպես....

Հեռացավ անդարձ...Ու անվերադարձ...

Միեր Ղազարյան